Առաջին կուրսեցիների շրջանում իրականացված հարցում

Հարցմանը մասնակցել է 69 առաջին կուրսի ուսանող՝ ներառյալ միջնակարգ կրթության հիմքով ընդունվածները:

Արդյունքները հետևյալն են՝



Առաջին կուրսեցիների թվին ավելացել է Արցախից տեղահանված 4 ուսանող, որը կազմում է առաջին կուրսի ուսանողների 5,5 %-ը: Այսպիսով, առաջին կուրսեցիների թիվը հոկտեմբեր ամսվա դրությամբ 73 է:



Նախորդ տարվա համեմատ եռապատկվել է կայքից և սոցիալական էջերից հաստատության մասին տեղեկատվություն ստացած ուսանողների թիվը: Կայքի բարելավման, սոցիալական հարթակներում ճիշտ թիրախային խմբի ընտրության և գովազդների տեղադրման շնորհիվ այս թիվը աճման միտում ունի:



Նախորդ տարվա համեմատ 1,12%-ով նվազել է ծնողի որոշմամբ հաստատություն դիմած ուսանողների թիվը, իսկ հաստատությունը որակյալ կրթությամբ պայմանավորված ընտրողների թիվն աճել է 15 %-ով: Հաստատության ծավալած գործունեության որակի մասին տեղեկատվության թափանցիկությամբ պայմանավորված՝ ցուցանիշը կբարելավվի:



Ողջունելի փաստ է, որ առաջին կուրսի ուսանողների համար գնահատելի են դասավանդողների կողմից դասավանդման կազմակերպումն ու վերջիններիս վերաբերմունքը:



Մասնագիտությամբ աշխատանք ունենալ ցանկացողների թիվն աճել է 5%-ով: Այստեղ զգալի անելիք կա կարիերայի կենտրոնի պատասխանատուի կողմից: Մասնագիտական կողմնորոշման ինտենսիվ դասընթացների շնորհիվ հնարավոր կլինի բարելավել այս ցուցանիշը:



Ուսանողները դրական են գնահատում հիմնադրամի կողմից ստեղծված պայմանները՝ ուսումնառությունը բարձր որակով իրականացնելու համար:



Խրախուսվում է նորարարական տեխնոլոգիաների ակտիվ կիրառումը դասապրոցեսի ընթացքում:



Անհրաժեշտ է ավելի հաճախ ուղղորդել ուսանողներին՝ օգտվելու ՌԿ-ում առկա գրականությունից, ինչպես նաև էլեկտրոնային գրականության հղումներից: Խրախուսվում է ինքնուրույն աշխատանքների հանձնարարումը մասնագիտական առարկաներից՝ հիմնադրամի ՌԿ-ում առկա գրականության կիրառմամբ:



Բնագիտական առարկաների համար կահավորված լսարանները, տեսացրիչներով և էլեկտրոնային գրատախտակներով լսարանային գույքի համալրումը, կարծում եմ, կբարելավեն ցուցանիշները:



Լավ ցուցանիշ է, թեև բարելավման աշխատանքների կարիք կա: Հաջորդիվ հարցման մեջ լավ կլինի ներառել պատճառները բացահայտող հարցադրում: